Հաստատված է
ՀՀ կրթության և գիտության
նախարարի
«24» 02 2003թ.-ի
N 109-Ա հրամանով
Նախարար

Ա.ՍԿՐՏՉՅԱՆ

Տպագրված է 6 օրինակ
Գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի Մալաթիա-Սեբաստիա
տարածքային բաժնում
Գրանցման N 290.210.02861
«21» 03 2003թ.-ի
Վկայական N 034056296
Բաժնի պետ

Ա.ԱՍՐՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2003

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության « Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն » պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կենտրոն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Կենտրոնը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության « Տեխնիկական ստեղծագործության մանկական հանրապետական կենտրոն » պետական հիմնարկի իրավահաջորդը:

2. Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Կենտրոնի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան-375032, Ծերենցի - 84:
4. Կենտրոնը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կենտրոնը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Կենտրոնն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն ու անգլերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Կենտրոնն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Կենտրոնն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
8. Կենտրոնը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների, մարզական և այլ կազմակերպությունների հետ:
9. Կենտրոնում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Կենտրոնի գործունեության առարկան և նպատակները լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացումն է, սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով տեխնիկական ստեղծագործության և տեխնիկական մարզաձևերի նկատմամբ նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացումը, ռազմահայրենասիրական դաստիարակությունը, կիրառական գիտելիքների ձևավորումը:
11. Կենտրոնն ապահովում է դպրոցականների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդումը և վարքի շեղումների կանխարգելումը :
12. Կենտրոնի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա
13. Կենտրոնի հիմնական խնդիրներն են
    ա) մինչև 18 տարեկան սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, և ֆիզիկական դաստիարակության ապահովումը հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները.
    բ) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
    գ) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպումը, արդյունավետ պայմանների ապահովումը.
    դ) տեխնիկական ստեղծագործության և տեխնիկական մարզաձևերի առանձնահատկությունների շնորհիվ դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, գիտատեխնիկական խնդիրներին հաղորդակցվելը, նրանց կարողությունների ու հմտությունների և ձեռներեցության զարգացումը.
    ե) ընտրած տեխնիկական ստեղծագործության խմբակներում և տեխնիկական մարզաձևերում սովորողների ստեղծագործական և մարզական ընդունակությունների կատարելագործումը.

զ) հանրապետության քաղաքներում և շրջաններում գործող տեխնիկական ստեղծագործական խմբակների և տեխնիկական մարզաձևերի խմբակների աշխատանքների նկատմամբ մեթոդական օգնության ապահովումը:

է) տեխնիկական ստեղծագործության և տեխնիկական մարզաձևերից հանրապետական մրցույթների, մրցումների և նրանց ստեղծած մոդելների ցուցահանդեսների կազմակերպում:

14. Կենտրոնը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով

ա) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում,

բ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,

գ) ճամբարների կազմակերպում,

դ) տեխնիկական մարզաձևերից միջոցառումների կազմակերպման և աջակցման գործունեություն,

ե) կրթական գործունեության այլ տեսակներ,

Կենտրոնը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

15. Կենտրոնը իր ուղղություններին համապատասխան իրականացնում է կրթադաստիարակչական ծրագրեր համաձայն իր կանոնադրության:

16. Կենտրոնում ուսումնադաստիարակչական և խմբակների աշխատանքները կազմակերպվում են ուսումնամարզական պլանների, ուսումնական ծրագրերի և ժամանակացույցին համապատասխան:

17. Կենտրոնը մշակում է գործունեության իր ծրագրերը հաշվի առնելով սաների հետաքրքրություններն ու հակումները, ընտանիքի և կրթական համակարգի պահանջները:

18. Սաներն ընդգրկվում են կենտրոնի նույն կամ տարբեր տարիքի միավորումներում (խմբակ, ակումբ, մարզական խումբ, թիմ և այլն): Յուրաքանչյուր սան իրավունք ունի ընդգրկվելու տարբեր միավորումներում:

19. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող բոլոր միավորումներում պարապմունքները պետք է լինի շաբաթական 2-3 անգամ, ընդ որում, յուրաքանչյուր միավորումում պետք է ընդգրկվի առնվազն 7-12 երեխա:

20. Կենտրոնը գործում է ամբողջ տարվա ընթացքում, ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Հաստատությունում սահմանվում է 6-օրյա ուսումնական շաբաթ՝ ըստ ուսումնական պլանի:

IV ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

21. Կենտրոնի կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:
22. Կենտրոնի կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Մանկավարժական խորհուրդն իր լիազորության սահմաններում քննարկում և առաջարկություններ է ներկայացնում՝
   ա) կենտրոնի կանոնադրության վերաբերյալ,
   բ) կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունների և կրթական ծրագրերի, առաջադրված խնդիրների իրականացման ձևերի ու միջոցների վերաբերյալ,
   գ) ուսումնական պլանների ու ծրագրերի վերաբերյալ՝ ելնելով կենտրոնի հիմնական խնդիրներից, նպատակներից, կադրային և նյութական հնարավորություններից, սաների ու նրանց ծնողների հետաքրքրություններից,
   դ) լրացուցիչ կրթական ծրագրեր, առաջավոր փորձի տարածման վերաբերյալ,
   ե) մանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և խրախուսման վերաբերյալ:

   Կենտրոնի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են մանկավարժական աշխատողները: Մանկավարժական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև հիմնադրի և ծնողական համայնքի ներկայացուցիչներ:

   Մանկավարժական խորհրդի նիստերը հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ: Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

   Մանկավարժական խորհրդի նիստերը նախագահում է կենտրոնի տնօրենը:
23. Կենտրոնի հիմնադիրն ունի կենտրոնի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

24. Կենտրոնի հիմնադրի բացառիկ լիազորություններն են

ա/ կենտրոնի հիմնադրումը,

բ/ կենտրոնի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ/կենտրոնի օրինակելի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

դ/ կենտրոնի վերակազմակերպումը և լուծարումը.

ե/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

25. Նախարարությունը իրականացնում է կենտրոնի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

26. Նախարարությունը

ա/ կենտրոնի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ/ վերահսկողություն է իրականացնում կենտրոնի գործունեության նկատմամբ.

գ/ պահանջում կամ ուժը կորցրած է ճանաչում կենտրոնի գործադիր մարմնի կամ նրա գիտական կառավարման մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ/ լսում է կենտրոնի գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե/ վերահսկողություն է իրականացնում կենտրոնին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ/ վերահսկողություն է իրականացնում կենտրոնի սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է/ հաստատում է կենտրոնի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը/ իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

թ) հաստատում է կենտրոնի տարեկան ծախսերի նախահաշիվը:

27. Կենտրոնի տնօրենն իրականացնում է կենտրոնի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, հիմնադրի ու նախարարության որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում,

ղեկավարում է կենտրոնի գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ նախարարության որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

28. Տնօրենը

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կենտրոնի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) նախագահում է կենտրոնի մանկավարժական խորհրդի նիստերը.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և նախարարության որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կենտրոնի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.

դ) տալիս է կենտրոնի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

ե) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է կենտրոնի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

է) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

ը)սահմանում է կենտրոնի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում կենտրոնի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է կենտրոնի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք, ներկայացնում նախարարության հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կենտրոնի կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

29. Տնօրենի բացակայության դեպքում, նախարարության հրամանի համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

30. Կենտրոնի տնօրենի՝ ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը

ա/ պատասխանատու է կենտրոնում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար.

բ/ վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի խմբակներում ընդգրկված սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում խմբակների սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

գ/ կենտրոնում և հանրապետության մյուս շրջաններում ու քաղաքներում,որտեղ գործում են տեխնիկական ստեղծագործության կենտրոններ,մարզատեխնիկական խմբակներ, նրանց համար կազմակերպում մեթոդական աշխատանք, կազմում ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի վիճակի մասին հաշվետվություններ.

դ/ ընդհանրացնում և տարածում է լավագույն խմբակավարների,մարզիչ-մանկավարժների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.

ե/ ապահովում է կենտրոնի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը

զ/ կազմակերպում է սովորողների հանգիստը և ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ

31. Կենտրոնի տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը

ա) պատասխանատու է կենտրոնի շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, կենտրոնի սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, կենտրոնի ուսումնական պարապմունքներին դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

բ) միջոցներ է ձեռնարկում կենտրոնի ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար.

32. Խմբակի ղեկավարը (խմբակավարը), մարզիչ-մանկավարժը

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում իր խմբակի սաների շրջանում սերտորեն համագործակցելով մյուս խմբակավարների և մարզիչ-մանկավարժների հետ.

բ) ապահովում է սովորողների նկատմամբ կենտրոնի և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը.

գ) իրականացնում է խմբակի համար սահմանված գործավարությունը, կենտրոնի տնօրինությանը ներկայացնում սովորողների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ.

դ) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, մրցումներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ.

ե) արգելում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են սաների առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

V. ԿԵՆՏՐՈՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

33. Կենտրոնի սեփականությունը ձևավորվում է կենտրոնի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կենտրոնի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
34. Կենտրոնն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
35. Հիմնադիրը սեփականության իրավունքով կենտրոնին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կենտրոնի լուծարումից հետո մնացած գույքի:
36. Կենտրոնի սեփականության պահպանման հոգսը կրում է կենտրոնը:
37. Կենտրոնի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
38. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կենտրոնին ամրացված գույքը:
39. Կենտրոնն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կենտրոնն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կենտրոնի կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները կենտրոնի սեփականությունն են՝ բացառությամբ ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարների, որոնք սահմանված կարգով ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Կենտրոնին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
40. Կենտրոնը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

41. Կենտրոնի ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին (պետության կարիքների համար ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

42. Կենտրոնի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

ա/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

բ/ բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կենտրոնի կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

43. Կենտրոնի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) նախարարության կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

44. Կենտրոնը շահույթը նպատակաուղղում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

45. Կենտրոնը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

VI. ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

46. Կենտրոնի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները որպես կանոն մինչև 18 տարեկան սաներն են, նրանց ծնողները /օրինական ներկայացուցիչները/, մանկավարժական աշխատողները:

47. Երեխաների ընդունելության ժամանակ կենտրոնի տնօրինությունը պարտավոր է ծնողներին /օրինական ներկայացուցիչներին/ ծանոթացնել կենտրոնի կանոնադրությանը

և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են կենտրոնի գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու կենտրոնի ներքին կարգապահական կանոններով:

48. Սաների ծնողների /օրինական ներկայացուցիչների/ իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են կենտրոնի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

49. Կենտրոնի անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է նրա կանոնադրությամբ:

50. Որպես խմբակավարներ աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնք ունեն տեխնիկական ստեղծագործության խմբակների հետ աշխատելու փորձ, մասնագիտական-մանկավարժական որակավորում:

51. Կենտրոնի մանկավարժն իրավունք ունի մասնակցելու կենտրոնի կառավարմանը, համատեղությամբ կատարել գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

52. Կենտրոնի մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կենտրոնի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

53. Կենտրոնի մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական և մարզական ծրագրերի կատարումը:

54. Կենտրոնում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

55. Սանը պարտավոր է

բարեխղճորեն մասնակցել խմբակի պարապունքներին, արժանավայել մասնակցել կենտրոնի կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումներին,

խնամքով վերաբերվել կենտրոնի գույքին,

հարգել կենտրոնի սաների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը,

պահպանել կենտրոնի ներքին կարգապահական կանոնները:

56. Կենտրոնի երեխաների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կենտրոնի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

VII. ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

57. Կենտրոնը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

58. Կենտրոնի լուծարման դեպքում կենտրոնի պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: